



ՀԱՅՈՒ ԿՈՄՍՏԱՆՅԱՆ



*Hakop
Hovnatanian*

1806-1881



Հակոբ
Հովնաթյանյան
1806-1881

ԱԿՕՍ
ՕՎՆԱՏԱՆԻԱՆ
ՆԱԿՕՐ
ՈՎՆԱՏԱՆԻԱՆ



A. 49044

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ







ակոր Հովնաթանյանի դիմանկարները բազմադարյան հայ արվեստի ամենափայլուն էջերից են: Սակայն սրանով բնավ չի սահմանափակվում նկարչի նշանակությունը: Հովնաթանյանը իբրև նոր, աշխարհիկ ու իրապաշտ արվեստի նախահայր նկարչության մեջ կատարել է մոտավորապես այն դերը, ինչ նրա նշանավոր ժամանակակից ինչպես որ Արովյանը գրականության մեջ:

Հայկական արվեստը իր վարգացման նոր ճանապարհին առաջին քայլերն արեց դեռևս 17-րդ դարում, Սպահանի մոտ գտնվող Նոր-Ջուղայի հայկական գաղութում: Սակայն սկսածն անավարտ չմնաց: 18-րդ դարում այդ հույակապ գործը շարունակեցին Հակոբի նախնիները՝ նկարիչներ Հովնաթանյանները, ի դեմս այդ սերունդի նախահայր Նահաջ Հովնաթանյանի (1666—1722), նրա որդիների՝ Հակոբի (ավագ), Արուիսիևի և Թոռան՝ Հովնաթան Հովնաթանյանի:

Հակոբ Հովնաթանյանի մանկության ու պատանեկության տարիներին, 19-րդ դարի 30-ական թվականներին, հայերի, վրացիների և կովկասյան մյուս ժողովուրդների կյանքում կարևոր քաղաքական իրադարձություններ տեղի ունեցան: Հայաստանի միացումը Ռուսաստանին ստեղծեց պայմաններ, որա տնտեսական և մշակութային վարգացման՝ արվեստի, գրականության ձևավորման վերջնական շրջադարձի համար:

1806 թվականին, Թիֆլիսում, եկեղեցական միջակ նկարիչ Մկրտում Հովնաթանյանի ընտանիքում ծնվեց Հակոբը: Շատ չնչին տեղեկություններ են մեզ հասել նրա կյանքից ու գործունեությունից: Արվեստի բնագավառում նրա առաջին դաստիարակը եղել է հայրը: 1829 թվականին Հակոբը փորձում է ընդունվել Պետերբուրգի կայսերական

Գեղարվեստի ակադեմիան, սակայն ապարդյուն. կանոնադրության համաձայն, ակադեմիա էին ընդունվում միայն 10—12 տարեկան սաները:

Հովնաթանյանի ինքնուրույն գեղարվեստական գործունեությունը վաղ սկսվեց, 20-ական թվականների վերջերին: Արդեն 40-ական թվականների կեսերին նա լայն ճանաչում է գտնում Թիֆլիսում: «Ում դիմանկար էր պետք, վազում էր Ավնատանովի մոտ և նա միշտ էլ հաջողությամբ բավարարում էր բոլոր պահանջները» — գրում է նրա քաջատեղյակ ժամանակակիցը, «Իլյուստրացիա» ամսագրում 1846 թ.: Սակայն հետագայում, դազերրոտիայի և ապա լուսանկարչության հայտնելվել նկարչի համար ճակատագրական հետևանքներ ունեցան: Նկատելիորեն կրճատվեցին պատվերները, չնայած 50—60 թվականները նրա արվեստի ամենաբուռն ծաղկման տարիներն էին: Պատվերների բացակայության պատճառով նկարիչը 70-ական թվականներին ստիպված տեղափոխվեց Պարսկաստան, ուր և 1881 թվին մահացավ:

Հովնաթանյանի մահը աննկատ անցավ հայրենիքում: Նկարչի արվեստը, որ սոռացված էր դեռևս նրա կենդանության օրոք վերջնական սոռացության մատնվեց մահվանից հետո: Միայն սովետական կարգերի հաստատումից հետո, սկսվեց հետաքրքրությունը Հ. Հովնաթանյանի արվեստի նկատմամբ: Նկարչի աշխատանքները ձեռք են բերում Հայաստանի պետական պատկերասրահը և Վրաստանի Արվեստների թանգարանը: Նրա ստեղծագործությունները ուսումնասիրության առարկա դարձան:

Հ. Հովնաթանյանի «հայտնագործման» առաջին տարիներին ուսումնասիրողներն ընդհարվեցին մի ամբողջ շարք դժվարությունների ու հանելուկների հետ, որոնցից շատերը այժմ հաջթահարված են:

Հակոբ Հովնաթանյանը սովորություն չի ունեցել ոչ ստորագրելու և ոչ էլ թվագրելու իր աշխատանքները: Հովնաթանյանի բոլոր դիմանկարներից միայն մեկն է ստորագրված, դա «Անհայտ գեներալի դի-

մանկարն է»: Իսկ մեկ ուրիշ դիմանկարի հակառակ երեսին («Պատանի Բերուտովի դիմանկարը») այսպիսի մակագրություն կա. «Նկարել է Ա. Ավետանովը, 1840 թ. 9-ը մարտի»: 1911 թվականին նկարչի դուստրը՝ Նունե Սեթխանյանը, Էջմիածնին է նվիրում կաթողիկոս Ներսես Աշտարակեցու դիմանկարը: Հակառակ երեսին նվիրատուի մակագրությունն է, որով հաստատվում է աշխատանքի պատկանելությունը իր հորը: Մի քանի այսպիսի վկայություններ ևս գոյություն ունեն, որոնք և հնարավորություն են տվել ճանաչելու նկարչի վաշտ ստեղծագործությունները, որոշելու դրանց կատարման ստույգ կամ մոտավոր ժամանակը: Հայտնաբերված դիմանկարները թեև նկարչի ստեղծագործությունների փոքր մասն են կազմում, սակայն Երանճամյան բավարար են նրա ստեղծագործական ուղու մասին պարզորոշ պատկերացում կազմելու համար:

Հովնաթանյանի արվեստի մի շարք հատկանշական կողմերը երկվան են գալիս 20-ական թվականների վերջին և 30-ական թվականների սկզբին:

Նկարչի վաղ շրջանի աշխատանքների թվին են պատկանում Նիկո Էրիսթավիի 1829 թվակիր դիմանկարը, ծերունի Գուրգենբեկյանի և նրա բրոջ (մասնավոր հավաքածու) դիմանկարները, որոնք կատարվել են մոտավորապես միևնույն ժամանակ: Երիտասարդ նկարչի երեք աշխատանքներում էլ արդեն նշմարվում են նրա արվեստին հատուկ որոշակի գծեր, մարմինների հարթապատկերային լուծում, դեմքերի թեթև նշակում հատկապես ծավալային նկարված ձեռքի մատները: Ձեռքերը նկարչի դիմանկարներում ինչ-որ չափով փոխարինում են ստորագրությունը, քանի որ Հովնաթանյանին ընդօրինակողներից և ոչ մեկը (իսկ նրանք քիչ չեն եղել), չի կարողացել հասնել այդպիսի նրբություն:

Ժամանակային կարգով հաջորդ աշխատանքը՝ սարկավազ Աստվածատուր Սարգսյանի դիմանկարն է, որն ունի կատարման ստույգ

թվական՝ 1834 թ. 22-ը մարտի: Հստակ արտահայտված արևելյան դիմագծերով այս երիտաւարդի դիմանկարը այնքան էլ չի տարբերվում նախորդներից: Բոլոր այս շրջանի կտավներում նկարչի խնդիրը սահմանափակվել է հիմնականում պատկերվողների դիմագծերը ներկայացնելով:

Նկարչի ստեղծագործության մեջ նկատելի փոփոխություններ են կատարվում 30—40-ական թվականների սկզբին: Մոտավորապես այս ժամանակին են պատկանում մի քանի կանացի դիմանկարներ, որոնց մեջ հատկապես արժանահիշատակ են երկուսը՝ Նատալյա Թեոմյանի և Սալոմե Անդրոնիկաշվիլու դիմանկարները: Նկարիչը վարձանալի հուլականությամբ է բացում երկու դեռատի կանանց ներաշխարհը: Թեոմյանի դիմանկարում, նրա հիվանդագին, գունատ դեմքի թախծոտ արտահայտության մեջ, նկարիչը վզացել է հիվանդությամբ տառապող իր բնորդուհու ծանր վիճակը: Սալոմե Անդրոնիկաշվիլին պատկերված է փոքր-ինչ երկչոտ, դյուրահավատ հայացքով: Նույնքան առաքինող են պատանիների ու մանուկների դիմանկարները: Պատանին Բերբուտովների գերդաստանից, Ն. Սուրգունյանը, Ակիմյանի տղաները, Պ. Գուրգենբեկյանը:

40-ական թվականներին Հակոբ Հովնաթանյանը հանդես է գալիս արդեն որպես լիովին ձևավորված նկարիչ: Նա ընդլայնում ու խորացնում է իր առջև դրված դիմանկարային խնդիրը՝ հաղորդել պատկերվողի ներաշխարհը, խառնվածքը: Նկարիչն ազատ չէր բնորդներ ընտրելիս: Նրա պատվիրատուները միայն Թիֆլիսի ունևոր քաղաքացիներն էին, ավանականներ ու աստիճանավորներ: Նկարիչը պատկերում է նրանց սահմանափակ, ոչ խոր հոգեկան աշխարհը: Հովնաթանյանական դիմանկարներում այսպես են ներկայանում Վ. Սուրգունյանը, Զարաջյանը, ծերունի Ակիմյանը, Մելիքով և ուրիշներ:

Նկարիչը հատուկ սիրով էր երվնագրում կանացի դիմանկարները:

Նրա գուլիս-գործոցներից մեկն է Մելիքովայի դիմանկարը: Սքանչելի է բավկաթռուում հանգիստ ու արժանապատվությամբ նստած, հարուստ պզեստավորված, այդ գեղեցկադեմ, ջահել կինը: Մելիքովայի դիմանկարը գերում է ոչ միայն գեղեցկությամբ ու երիտասարդությամբ, այլև ընթուշ երփնագրով: Ինչպիսի ճաշակով են պուգորդվել թավշե պզեստի մուգ-կապույտ և մետաքսյա ժապավենի բաց դեղին գույները:

Մենք ոչինչ չգիտենք Հովնաթանյանի անծնավորության մասին, բայց ելնելով նրա դիմանկարներից, կարող ենք ասել, որ նա ապնիվ էր իր արվեստում, նկարիչը չէր սիրաշահում պատվիրատուներին, թեև բարձրաստիճան դեմքեր էին դրանք: Այս իմաստով հատկանշական է Կովկասի գլխավոր հրամանատար Գոլովինի դիմանկարը: Նկարիչը բնավ չի մեղմացրել թագավորական կուսակալի, Նիկոլայ Առաջինի հավատարիմ կամակատարի նենգ էությունը: Առավել ևս վանող է համապզեստ հագած անհայտ աստիճանավորի ծնկահաս դիմանկարը: Բավական է դիմանկարին նետել թռուցիկ հայացք, որպեսզի դիտողի առջև բացվի այդ անհոգի էակի անհրապույր կենսագրությունը, մի պաշտոնյայի, որի հայացքը մատնում է նրա անսանձ կամքի լիիշխանությունը ցածր խավերի նկատմամբ և ստորաքարշությունը բարձր աստիճանավորների առջև:

Սակայն մարդկային հոգեբանությունը առավելագույն խորությամբ բացահայտելու տեսակետից, անգերապանցելի է Ներսես Աշտարակեցու դիմանկարը, որը կատարվել է 50-ական թվականների կեսերին: Հայկական եկեղեցու վեհափառի բնութագրությունը, թե արտաքինի և թե ներքնաշխարհի առումով, տրված է սպառիչ ու անօրինակ վարպետությամբ: Ինչպիսի տիրականություն է կարդացվում այդ ծերունու խորիմաստ աչքերում: Չվստահող, քննախույզ հայացքով է նա նայում իր աներևույթ պրուցակցին: Պակաս հույակապ չէ Աշտարակեցու դիմանկարի երփներանգը: Ինչպիսի անթերի ճաշակով է մուգ մանու-

շակագուլնի, գրեթե սևին տվող սքեմի վրա ընդգծված սուրբ Աննայի շքանշանի բոսոր ժապավենը: Արտահայտչության տեսակետից այս դիմանկարը իր նմանը չունի բովանդակ հայկական դիմանկարչության մեջ ու կարող է դրվել ռուս և արևմտաեվրոպական վարպետների դիմանկարների կողքին, ըստ որում՝ ոչ միայն ժամանակակից, այլև ավելի վաղ շրջանի նկարիչների:

Լուսանկարներից հայտնի են նկարչի մի քանի աշխատանքներ, կատարված Պարսկաստանում: Դրանք ոչ մի նոր բան չեն ավելացնում Հովնաթանյանի մասին գոյություն ունեցող մեր պատկերացումներին, բայց և չեն խոսում ծերունավաղ նկարչի ծիրքի անկման մասին:

Հովնաթանյանի աճիվեստը, ինչպես և արվեստի յուրաքանչյուր խոշոր ելույթ, խորապես ազգային է, խորապես յուրօրինակ: Հեշտությամբ կարելի է գտնել այն թելերը, որոնցով նկարիչը կապվում է Հովնաթանյանների ընտանիքի ավագ սերնդի նկարիչների հետ: Միաժամանակ որևէ կասկած չի հարուցում և այն, որ հայ վարպետը ծանոթ էր ոչ միայն ռուսական, այլև արևմտաեվրոպական արվեստին: Դա մեկ իրավունք է վերապահում Հովնաթանյանին առանձնացնել ոչ միայն ժամանակակից, այլև հայ դիմանկարիչների հետագա սերնդից, և նրա արվեստը համադրել դիմանկարչության ժանրի համաշխարհային անուն վաստակած խոշորագույն վարպետների ստեղծագործությանը:

Հայ ժողովուրդը ամենայն իրավամբ հպարտանում է մեծ նկարչի՝ Հակոբ Հովնաթանյանի հիասքանչ արվեստով:

Ռ. ԴՐԱՄԲՅԱՆ

Выдающееся место, занимаемое Акопом Овнатаяном в армянском искусстве, обусловлено прежде всего блестящим мастерством его портретов. С именем Акопа Овнатаяна связано также окончательное становление армянской живописи на светский и реалистический путь развития.

Сохранились скудные сведения об Акопе Овнатаяне. Он родился в Тифлисе в 1806 г. Первым и единственным наставником в искусстве А. Овнатаяна был отец его, посредственный церковный живописец. Пытка художника поступить в Императорскую Академию художеств в Петербурге не удалась, ввиду возрастного несоответствия художника условиям приема.

Продолжая работать в Тифлисе и быстро совершенствуясь в своем искусстве Акоп Овнатаян достиг большой известности. В настоящее время известно свыше пятидесяти портретов художника, от конца 20-х—начала 30-х годов и до 70-х годов XIX века, которые дают возможность проследить как шло развитие искусства художника, как быстро росло его незаурядное мастерство. Полного расцвета портретное искусство А. Овнатаяна достигает в сороковых и особенно в пятидесятых годах. Такие портреты А. Овнатаяна, как Меликовой, католикоса Нерсеса Аштаракци, неизвестного чиновника, его жены, являясь лучшими работами художника,

могут быть поставлены в один ряд с известными работами западно-европейских и русских портретистов его времени.

Примечательны женские портреты А. Овнатаяна. Среди последних, кроме упомянутого портрета Меликовой, следует отметить портреты Саломе Андроникашвили и Наталии Теумян, в которых художник с исключительным обаянием передает образы молодых женщин.

Успех, который имел Акоп Овнатаян у своих заказчиков,—тифлисской буржуазии, дворянства и чиновников, не был продолжителен. Появление дагерротипа, а затем фотографии сильно отразилось на заказах, что вынудило художника переехать в 1870-х годах в Иран, где он и скончался в 1881 году. Искусство Акопа Овнатаяна, забытое при жизни художника, было совершенно предано забвению после его смерти. Лишь в советские годы появился интерес к искусству художника. Его портреты начинают собираться в Картинной галерее Армении в Ереване и в Музее искусств Грузии в Тбилиси.

Первоначально, при изучении и атрибуции портретов А. Овнатаяна пришлось столкнуться с рядом трудностей, вызванных тем, что художник не имел обыкновения как подписывать свои портреты, так и датировать их. Однако, с течением времени выявилось несколько портретов, в которых авторство художника было бесспорно, так как оно подтверждалось или письменным свидетельством потомков художника, как например, в отношении портрета католикаса Нерсеса Аштаракеци, подаренного Эчмиадзинскому музею дочерью художника с удостоверительной надписью. В одном из

портретов—юноши из семьи Бебутовых, имеется надпись, где даже точно указывается не только год, но и день исполнения. Совершенно случайно на одном портрете оказалась подпись художника на русском языке. Таких достоверных свидетельств набралось еще несколько и они, в конечном итоге, позволили выявить остальные портреты художника и отделить их от работ его подражателей и установить приблизительное время их исполнения.

Искусство Акопа Овнатяна глубоко национально и имеет в то же время свое индивидуальное лицо. Нет никаких сомнений в том, что свое высокое мастерство художник выработал на знакомстве и изучении не только русских, но и западно-европейских портретистов, что в конечном итоге позволило лучшие его портреты поставить в один ряд с выдающимися портретистами других стран и народов.

Армянский народ с полным правом может гордиться Акопом Овнатяном, так как искусство художника, одна из значительных вех его многовековой художественной культуры.

Р. ДРАМПЯН

Hacob Hovnathanian is occupying a conspicuous place in Armenian painting, first of all by virtue of the brilliant artistry of his portraits. Moreover, the final passage of Armenian painting into the secular and realistic path is linked with his name.

Very meagre information is available about Hacob Hovnathanian.

He was born in Tiflis in 1806. His first and sole instructor in art was his father, a mediocre icon-painter.

Hacob Hovnathanian attempted to enter the Imperial Academy of Fine Arts of Petersburg, but failed because of his age.

Carrying on his work in Tiflis and perfecting his technique he acquired widespread fame.

More than fifty of the artist's portraits painted from the late 1820's and the early 30's down to the 70's, have been preserved and indicate the development of his art, the rapid growth of his outstanding mastery.

Hacob Hovnathanian achieved an accomplished technique as a portraitist in the 40's and particularly the 50's.

The portraits of Melikova and the Catholicos Nerses Ashtaraketzi, as well as those of the Unknown Official and His Wife are his masterpieces and compare favourably with the best works of his contemporaries both in Western Europe and Russia.

His women's portraits are especially remarkable. Among them, besides Melikova's above-mentioned portrait, we must note those of Səlomé Andronikashvili and Natalia Teoumian, depicting with exceptional charm the images of the two young women.

The artist had a rather short-lived success with clients among the Tiflis bourgeoisie, nobility and officialdom. The appearance of the daguerreotype, followed in the wake by the photograph, diminished considerably the orders for portraits. The painter was forced to move to Iran where he stayed till his decease in 1881.

Hacob Hovnathanian's art, ignored in the latter years of his life, sunk into a complete oblivion after his decease. Only after the establishment of Soviet power in Armenia his art attracted a keen interest and his canvases were collected in the State Art Gallery of Armenia (Yerevan) and the Fine Arts Museum of Georgia (Tbilisi).

At first the study and attribution of Hacob Hovnathanian's portraits raised certain difficulties, due to the fact that the painter did not stick to the practice of signing and dating his works. However, in the course of time were discovered several portraits whose authorship was beyond doubt, as it was confirmed in writing by the painter's descendants. This applies, for instance, to Nerses Ashtaraketzi's portrait which was presented to the Museum of Etchmiādzin by the artist's daughter with a conclusive dedication.

On a portrait of one of the youths of the Beybootov

clan is to be found a note indicating not only the year but also the very day it was completed.

On another portrait was found the painter's signature in Russian. A few more similar noteworthy clues entitled the specialists to attribute the artist's portraits, to tell them from the works of his imitators and ascertain the approximate date of their execution.

Hacob Hovnathanian's work is profoundly national and at the same time has its individual profile. Moreover, undoubtedly the painter has worked out his high proficiency through a close acquaintance and study of not only Russian, but also West European painters and accordingly can be classed with the prominent artists of other countries and peoples.

The Armenian people are entitled to be proud of Hacob Hovnathanian, since the painter's art is one of the remarkable landmarks of their millennial culture.

R. DRAMPAN

A II 49044

La peinture arménienne possède un brillant portraitiste en la personne d'Hacop Hovnathanian qui a su allier habilement le caractère réaliste aux traditions nationales de l'art arménien.

Né à Tiflis en 1806, Hacop Hovnathanian a eu pour seul et unique maître son père, simple peintre religieux. Tous les efforts du jeune peintre pour entrer à l'Académie impériale des beaux-arts de Saint-Petersbourg n'ont abouti à rien, à cause de son âge qui ne lui permettait pas d'avoir le droit d'accès aux cours, vu les conditions exigées pour l'admission.

Continuant son travail à Tiflis et se perfectionnant rapidement dans son art, H. Hovnathanian a acquis bientôt une grande célébrité. Actuellement plus de 50 toiles du peintre nous sont connues, la plupart de ces portraits peints entre les années de 1820—1870 nous donnent la possibilité de constater la croissance de son génie artistique avec une empreinte personnelle qui ne cesse de se développer au cours de sa carrière. Son talent dans l'art du portrait s'épanouit tout à fait dans toutes ses oeuvres qui s'échelonnent de 1840—1870.

Les portraits tels que „Melikova“, „Le Catholicos Nersès d'Achtarak“, „Un Fonctionnaire inconnu“, „La Femme d'un fonctionnaire“ sont les meilleurs ouvrages du peintre. Ces toiles peuvent être exposées au même rang que les chefs-d'oeuvre des portraitistes européens occidentaux et russes de son époque.



Les portraits de femmes d'Hacop Hovnathanian sont remarquables. Parmi ceux-ci, outre le portrait de „Melikova“, il est intéressant de citer le portrait de „Salomé Antronikachvili“ et celui de „Nathalie Téoumian“ dans lesquels le peintre a reproduit l'image de la jeune femme d'une manière exceptionnellement naturelle et charmante.

Les succès obtenus par H. Hovnathanian chez ses clients de Tiflis, bourgeois, officiers ou nobles, eh bien ces succès n'ont pas fait long feu. En 1870, l'apparition de la daguer-réotypie, puis la photographie ont obligé le peintre à quitter Tiflis pour gagner l'Iran où il est mort en 1881. L'art pictural d'Hacop Hovnathanian déjà oublié de son vivant a été complètement voué à l'oubli. Ce n'est que sous le pouvoir soviétique qu'on a porté un vif intérêt à l'art du peintre et qu'on a apprécié sa juste valeur en lui réservant une place importante dans la peinture arménienne. Les portraits d'Hacop Hovnathanian ont été recueillis et exposés dans la Galerie nationale de l'Arménie à Erévan, ainsi que dans le Musée d'art de la Géorgie à Tbilissi.

Maintes difficultés ont surgi lors de l'étude et des attributions des portraits d'Hacop Hovnathanian, faute de signature et de date au bas des toiles; en effet le peintre n'avait pas l'habitude de signer et de dater ses oeuvres. Toutefois avec le temps quelques portraits apparus ont révélé la paternité des toiles; cela a été confirmé par des témoignages écrits transmis par les descendants du peintre, tel a été le cas du portrait du „Catholico Nersès d'Achtarak“ offert au Musée d'Etchmiadzine par

la fille du peintre en dédiant l'ouvrage. Sur de nombreuses compositions la date n'est pas stipulée, sur d'autres la signature n'est pas portée. L'on découvrit accidentellement la signature en russe d'Hacop Hovnathanian sur le portrait représentant la „Famille Beboutov“. Grâce à de tels témoignages bien fondés qu'on a pu révéler les autres portraits authentiques du peintre, les dégager des tableaux imités et de déterminer la date approximative de leur exécution.

L'art pictural d'Hacop Hovnathanian est profondément national et porte en même temps l'empreinte personnelle du peintre. Sans aucun doute la haute maîtrise du peintre s'est forgée par l'étude non seulement des oeuvres des portraitistes russes, mais aussi celles des portraitistes européens occidentaux. C'est justement cela qui permet de placer ses meilleurs portraits au même rang que ceux des célèbres peintres des autres pays.

Le peuple arménien a plein droit d'être fier de son peintre Hacop Hovnathanian, car l'art de celui-ci est l'une de ses cultures artistiques séculaires. A juste titre la tradition culturelle arménienne est devenue le symbole de fierté d'un peuple antique et renaissant.

R. DRAMPIAN



ՎԵՐԱՏՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ
РЕПРОДУКЦИИ
REPRODUCTIONS

1. ՍԱՐԿՎԱԿ ԱՍՏՎԱԾՎԱՏՈՒՐ ՍԱՐԳՍՅԱՆ.

1834 թ.

Կտավ, յուղաներկ, 41,5×33

Հայաստանի Պետ. պատկերասրահի հավաքածու

ДЪЯКОН АСТВАЦАТУР САРКИСЯН

1834 год

Холст, масло, 41,5×33

Соб. Государственной картинной галереи Армении

THE DEACON ASTVADZATOUR SARKISSIAN

1834

Canvas, in oil, 41,5×33


State Art Gallery of Armenia

LE DIACRE ASTVATSATOUR SARKISSIAN

Exécuté en 1834

Peinture à l'huile, 41,5×33

Collection de la Galerie des Beaux-Arts d'Etat de l'Arménie



1784
Königliche
Kammer- und
Schatzkammer
des Königs
zu Berlin
am 1. April 1784
N. 100



3. ԲԱՐՍԵՂ ՍՈՒՐԳՈՒՆՅԱՆ

19-րդ դ. 30-ական թվականների վերջեր

Կտավ, յուղաներկ, 48×35

Հայաստանի Պետ. պատկերասրահի հավաքածու

БАРСЕГ СУРГУНЯН

Конец 30-х годов XIX века

Холст, масло, 48×35

Соб. Государственной картинной галереи Армении

BARSEGH SURGUNIAN

The late 1830's

Canvas, in oil, 48×35


The State Art Gallery of Armenia

BARSEGH SOURGOUNIAN

Exécuté vers la fin des années 30 du XIX siècle

Peinture à l'huile, 48×35

Collection de la Galerie des Beaux-Arts d'Etat de l'Arménie



4. ՇՈՒՇԱՆԻԿ ԳՈՒՐԳԵՆԲԵԿՅԱՆ

19-րդ դ. 30-ական թվականներ

Կտավ, յուղաներկ, 65×51

Ռազդոլսկայայի հավաքածու. Լենինգրադ

ШУШАНИК ГУРГЕНБЕКЯН

30-ые годы XIX века

Холст, масло, 65×51

Соб. Раздольской. Ленинград

SHOUSHANIK GURGUENBEGUIAN

The 1830's

Canvas, in oil, 65×51

Privately owned by Razdolska. Leningrad

CHOUCHANIK GOURGUENBEKIAN

Exécuté vers les années 30 du XIX siècle

Peinture à l'huile, 65×51

Collection de Razdolsky. Léningrad



5. ՊՍՏԱՆԻ ԱԿԻՄՅԱՆԸ

19-րդ դ. 30-ական թվականների վերջեր

Կտավ, լուղաներկ, 58×45

Հայաստանի Պետ. պատկերասրահի հավաքածու

ЮНОША АКИМЯН

Конец 30-х годов XIX века

Холст, масло 58×45

Соб. Государственной картинной галереи Армении

YOUNG AKIMIAN

The late 1830's

Canvas, in oil, 58×45


The State Art Gallery of Armenia

LA JEUNE AKIMIAN

Exécuté vers la fin des années 30 du XIX siècle

Peinture à l'huile, 58×45

Collection de la Galerie des Beaux-Arts d'Etat de l'Arménie



6. ՍԱԼՈՄԵ ԱՆԴՐՈՆԻԿԱՇՎԻԼԻ

19-րդ դ. 40-ական թվականների սկիզբ

Կտավ, յուղաներկ, 48×38

Վրաստանի արվեստների թանգարանի հավաքածու

САЛОМЕ АНДРОНИКАШВИЛИ

Начало 40-х годов XIX века

Холст, масло, 48×38

Соб. Государственного музея искусств Грузии

SALOME ANDRONIKASHVILI

The early 1840's

Canvas, in oil, 48×38

The State Art Museum of Georgia

SALOMÉ ANDRONIKACHVILI

Exécuté au début des années 40 du XIX siècle

Peinture à l'huile, 48×

Collection du Musée d'Art d'Etat de la Géorgie



7. ՆԱՏԱԼՅԱ ԹԵՈՒՄՅԱՆ

19-րդ դ. 40-ական թվականների սկիզբ

Կտավ, լուղաներկ, 36,5×29,5

Հայաստանի Պետ. պատկերասրահի ֆակաբաժու

НАТАЛЬЯ ТЕУМЯН

Начало 40-х годов XIX века

Холст, масло, 36,5×29,5

Соб. Государственной картинной галереи Армении

NATALIA TEOUMIAN

The early 1840's

Canvas, in oil, 36,5×29,5


The State Art Gallery of Armenia

NATHALIE TEOUMIAN

Exécuté au début des années 40 du XIX siècle

Peinture à l'huile, 36,5×29,5

Collection de la Galerie des Beaux-Arts d'Etat de l'Arménie



8. ՆԻԿՈՂԱՅ ՍՈՒՐԳՈՒՆՅԱՆ

19-րդ դ. 30-ական թվականների վերջեր

Կտավ, յուղաներկ, 48,5×35

Հայաստանի Պետ. պատկերասրահի ֆակաբաժնու

НИКОЛАЙ СУРГУНЯН

Конец 30-х годов XIX века

Холст, масло, 48,5×35

Соб. Государственной картинной галереи Армении

NICOLAI SURGUNIAN

The late 1830's

Canvas, in oil, 48.5×35


The State Art Gallery of Armenia

NICOLAÏ SOURGOUNIAN

Exécuté vers la fin des années 30 du XIX siècle

Peinture à l'huile, 48,5×35

Collection de la Galerie des Beaux-Arts d'Etat de l'Arménie



9. Ե. ԳՈՒՐԳԵՆԲԵԿՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ

19-րդ դ. 40-ական թվականներ

Կտավ, յուղաներկ, 46,5×38,5

Հայաստանի Պետ. պատկերասրահի հավաքածու

ПОРТРЕТ Е. ГУРГЕНБЕКЯН

40-ые годы XIX века

Холст, масло, 46,5×38,5

Соб. Государственной картинной галереи Армении

THE PORTRAIT OF E. GURGUENBEGIAN

The 1840's

Canvas, in oil, 46,5×38,5


The State Art Gallery of Armenia

PORTRAIT DE E. GOURGUENBEKIAN

Exécuté vers les années 40 du XIX siècle

Peinture à l'huile, 46,5×38,5

Collection de la Galerie des Beaux-Arts d'Etat de l'Arménie



10. ԾԵՐՈՒՆԻ ԳՈՒՐԳԵՆԲԵԿՅԱՆԸ

19-րդ դ. 30-ական թվականներ

Կտավ, յուղաներկ, 65×51

Ռազդոլսկայայի հավաքածու, Լենինգրադ

СТАРИК ГУРГЕНБЕКЯН

30-ые годы XIX века

Холст, масло, 65×51

Соб. Раздольской. Ленинград

GURGUENBEGUIAN THE ELDER

The 1830's

Canvas, in oil, 65×51

Privately owned by Razdolska. Leningrad

LE VIEUX GOURGUENBEKIAN

Exécuté vers les années 30 du XIX siècle

Peinture à l'huile, 65×51

Collection de Razdolsky. Léningrad



11. ԱՆԱՆՅԱՆԻ ՊԻՄԱՆԿԱՐԸ

19-րդ դ. 40-ական թվականներ

Կտավ, յուղաներկ, 34×26,5

Հայաստանի Պետ. պատկերասրահի հավաքածու

ПОРТРЕТ АНАНИАН

40-ые годы XIX века

Холст, масло, 34×26,5

Соб. Государственной картинной галереи Армении

THE PORTRAIT OF ANANIAN

The 1840's

Canvas, in oil, 34×26,5

The State Art Gallery of Armenia

PORTRAIT D'ANANIAN

Exécuté vers les années 40 du XIX siècle

Peinture à l'huile, 34×26,5

Collection de la Galerie des Beaux-Arts d'Etat de l'Arménie



12. ԳԵՎՈՐԳ ԶԱՐԱԶՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ

19-րդ դ. 40-ական թվականներ

Կտավ, յուղաներկ, 44×35

Արևելքի ժողովուրդների արվեստների Պետ. թանգարանի
հավաքածու, Մոսկվա

ПОРТРЕТ ГЕВОРКА КАРАДЖЯНА

40-ые годы XIX века

Холст, масло, 44×35

Соб. Государственного музея искусств народов
Востока. Москва

THE PORTRAIT OF GEVORG KARADJIAN

The 1850's

Canvas, in oil, 44×35


The State Museum of Eastern Culture, Moscow

PORTRAIT DE GUEVORK KARADJIAN

Exécuté vers les années 40 du XIX siècle

Peinture à l'huile, 44×35

Collection du Musée d'Art des peuples d'Orient,
Moscou



13. ԱՆՀԱՅՏ ԾԵՐՈՒՆՈՒ ԳԻՄԱՆԿԱՐ

19-րդ դ. 40-ական թվականներ

Կտավ, լուղաներկ, 61×48

Հայաստանի Պետ. պատկերասրահի հավաքածու

ПОРТРЕТ НЕИЗВЕСТНОГО СТАРИКА

40-ые годы XIX века

Холст, масло, 61×48

Соб. Государственной картинной галереи Армении

THE PORTRAIT OF AN UNKNOWN OLD MAN

The 1840's

Canvas, in oil, 61×48

The State Art Gallery of Armenia

PORTRAIT D'UN VIEILLARD INCONNU

Exécuté vers les années 40 du XIX siècle

Peinture à l'huile, 61×48

Collection de la Galerie des Beaux-Arts d'Etat de l'Arménie



14. ՄԵԼԻԲՈՎԱՅԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ

19-րդ դ. 40-ական թվականներ

Կտավ, յուղաներկ, 65×55

Վրաստանի արվեստների թանգարանի հավաքածու

ПОРТРЕТ МЕЛИКОВОЙ

40-ые годы XIX века

Холст, масло 65×55

Соб. Государственного музея искусств Грузии

THE PORTRAIT OF MELIKOVA

The 1840's

Canvas, in oil. 65×55

The State Art Museum of Georgia

PORTRAIT DE MELIKOVA

Exécuté vers les années 40 du XIX siècle

Peinture à l'huile, 65×55

Collection du Musée d'Arts d'Etat de la Géorgie



15. ՄՈՎՍԵՍ ԼԻԼԻՊԱՐՅԱՆԻ ԳԻՄԱՆԿԱՐԸ

19-րդ դարի 40-ական թվականներ

Կտավ, լուղաների, 44,5×34,5

Հայաստանի Պետ. պատկերասրահի հավաքածու

ПОРТРЕТ МОВЦЕСА ЛИЛИПАРЯНА

40-ые годы XIX века

Холст, масло, 44,5×34,5

Соб. Государственной картинной галереи Армении

THE PORTRAIT OF MOVSES LILIPARIAN

The 1840's

Canvas, in oil, 44,5×34,5


The State Art Gallery of Armenia

PORTRAIT DE MOVSÈS LILIPARIAN

Exécuté en 1840

Peinture à l'huile, 44,5×34,5

Collection de la Galerie des Beaux-Arts d'Etat de l'Arménie



16. ԹԱՄԱՐԱ ՍԱԳԻՆՅԱՆ

19-րդ դ. 70-ական թվականներ

Շտավ, յուղաներկ, 55×43

Ա. Սագինյանի հավաքածու. Թեհրան

ТАМАРА САГИНЯН

70-ые годы XIX века

Холст, масло, 55×43

Соб. А. Сагинян. Тегеран

TAMARA SAGUINIAN

The 1870's

Canvas, in oil, 55×43


Privately owned by T. Saguinian, Teheran

TAMARA SAGHINIAN

Exécuté vers les années 70 du XIX siècle

Peinture à l'huile, 55×43

Collection de A. Saghinian, Téhéran



17. ԿԱԹՈՂԻԿՈՎ ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ

19-րդ դ. 50-ական թվականների կեսեր

Կտավ, յուղաներկ, 39,5×31,5

Հայաստանի Պետ. պատկերասրահի հավաքածու

КАТОЛИКОС НЕРСЕС АШТАРАКЕЦИ

Середина 50-х годов XIX века

Холст, масло, 39,5×31,5

Соб. Государственной картинной галереи Армении

THE CATHOLICOS NERSES ASHTARAKETZI

The middle 1850's

Canvas, in oil, 39,5×31,5

The State Art Gallery of Armenia

LE CATHOLICOS NERSESS D'ACHTARAK

Exécuté vers les années 50 du XIX siècle

Peinture à l'huile, 39,5×31,5

Collection de la Galerie des Beaux-Arts d'Etat de l'Arménie



18. ՄԵԼԻԿՈՎԻ ԳԻՄԱՆԿԱՐԸ

19-րդ դ. 40-ական թվականներ

Կտավ, լուղաներկ, 69×51

Վրաստանի արվեստների թանգարանի հավաքածու

ПОРТРЕТ МЕЛИКОВА

40-ые годы XIX века

Холст, масло, 69×51

Соб. Государственного музея искусств Грузии

THE PORTRAIT OF MELIKOV

The 1840's

Canvas, in oil, 69×51


The State Art Museum of Georgia

PORTRAIT DE MELIKOV

Exécuté vers les années 40 du XIX siècle

Peinture à l'huile, 69×51

Collection de Musée d'Art d'Etat de la Géorgie



19. ՍԱԼՈՄԵ ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆ (նկարչի կինը)

19-րդ դ. 50-ական թվականներ

Կտավ, լուղաներկ, 40×28,5

Հայաստանի Պետ. պատկերասրահի հավաքածու

САЛОМЕ ОБНАТАНЯН (жена художника)

50-ые годы XIX века

Холст, масло, 40×28,5

Соб. Государственной картинной галереи Армении

SALOME HOVNATHANIAN (the artist's wife)

The 1850's

Canvas, in oil, 40×28,5


The State Art Gallery of Armenia

SALOMÉ HOVNATHANIAN (épouse du peintre)

Exécuté vers les années 50 du XIX siècle

Peinture à l'huile, 40×28,5

Collection de la Galerie des Beaux-Arts d'Etat de l'Arménie




20. ԱՆՀԱՅՏ ՊԱՇՏՈՆՅԱ՝ ՀԱՄԱԶԳԵՍՈՎ
19-րդ դ. 50-ական թվականներ
Կտավ, յուղաներկ, 62×50
Վրաստանի արվեստների թանգարանի հավաքածու

НЕИЗВЕСТНЫЙ ЧИНОВНИК В МУНДИРЕ
50-ые годы XIX века
Холст, масло, 62×50
Собр. Государственного музея искусств Грузии

UNKNOWN OFFICIAL IN FULL DRESS
The 1850's
Canvas, in oil, 62×50
The State Art Museum of Georgia

LE FONCTIONNAIRE INCONNU EN UNIFORME
Exécuté vers les années 50 du XIX siècle
Peinture à l'huile, 62×50
Collection du Musée d'Art d'Etat de la Géorgie



21. ՆԱԶԵԼԻ ՕՐԲԵԼՅԱՆ

19-րդ դ. 50-ական թվականներ

Կտավ, յուղաներկ, 32×26

Հայաստանի Պետ. պատկերասրահի հավաքածու

НАЗЕЛИ ОРБЕЛЯН

50-ые годы XIX века

Холст, масло, 32×26

Соб. Государственной картинной галереи Армении

NAZELI ORBELIAN

The 1850's

Canvas, in oil, 32×26


The State Art Gallery of Armenia

NAZELI ORBELIAN

Exécuté vers les années 50 du XIX siècle

Peinture à l'huile, 32×26

Collection de la Galerie des Beaux-Art d'Etat de l'Arménie



22. ნინა ტიტჩვილი

1853 թ.

Կտավ, յուղաներկ, 47×35

Վրաստանի արվեստների թանգարանի հավաքածու

НИНА ЦИЦИШВИЛИ

1853 год

Холст, масло, 47×35

Соб. Государственного музея искусств Грузии

NINA TZITZISHVILI

The 1853's

Canvas, in oil, 47×35

The State Art Museum of Georgia

NINA TSITSICHVILI

Exécuté en 1853

Peinture à l'huile, 47×35

Collection du Musée d'Art d'Etat de la Géorgie



ՀԱԿՈՒ ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆ

(22 վերատարություններ)

Կազմեց և ձևավորեց՝

ԱՇՈՏ ՏՈՒԿՅԱՆԸ

Ներածական խոսք՝

ՌՈՒԲԵՆ ԴՐԱՄԲՅԱՆԻ

Գունավոր վերատարությունները (№ № 9, 11, 17 և 21) տպագրված են «Սովետականա Լատվիա» № 2 տպարանում, Ռիգայի կենտրոնական ցիկլոգրաֆիայում պատրաստված կլիշեներից

Հաշտտանցի ցկարչի տան
նրատարակություն



ՎՖ 04534

Պատվեր 281

Տպարանակ 4000

Հայկական ՍՍՀ Միջհատրների տվետին աղբրեր մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆարպյունաբերության գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65:

АКОП ОВНАТАНЯН

(Альбом репродукций)

Составил и оформил

Ашот ТОНИКЯН

Предисловие

Рубена ДРАМПЯНА

Цветные репродукции (№ № 9, 11, 17 и 21) напечатаны во второй типографии «Советская Латвия» с клише, изготовленные в центральной цинкографии г. Риги.

Издание

Дома художника Армении

Цена 1 руб. 50 коп.

ВФ 04534

Заказ 281

Тираж 4.000

Бреван, типография № 1, Алавердяна, 65.

54



*Harkop
Hovnatarian*

1806-1881



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220049044

50

II
A 49044

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉԻ ՏՈՒՆ
ՈՒՅՈՒՐԻՔԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԻ ԿՈՄԻՏԵ

Երևան

1969